



ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ

(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

41. ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՅՈՒՄ (Մարկ. է 14—23)

- է 14 Եվ նա ամբողջ ժողովրդին իր մոտ կանչելով՝ ասաց նրանց. «Ամենքդ ինձ լսեցե՛ք և իմացե՛ք».
- 15 չկա որևէ բան, որ մարդու մեջ դրսից մտնելով կարողանա նրան պղծել. այլ այն, ինչ ելնում է նրանից, ա՛յն է, որ պղծում է մարդուն:
- 16 Ով որ ականջներ ունի լսելու, թող լսի»:
- 17 Եվ երբ ամբոխից բաժանվելով տուն մտավ, աշակերտները այդ առակի մասին նրան հարցրին:
- 18 Եվ նա ասաց նրանց. «Դո՛ւք էլ այդպես անաշխտ եք, չե՛ք իմանում, թե ամեն բան, որ դրսից մարդու մեջ է մտնում, չի կարող նրան պղծել,
- 19 որովհետև ոչ թե նրա սիրտն է մտնում, այլ՝ որովայնը և դուրս է ելնում ու մաքրում բոլոր կերածները»:
- 20 (Այսպես բոլոր ուտելիքները մաքուր են):
- 21 Եվ ասում էր. «Ինչ որ մարդուց դուրս է գալիս, ա՛յն է, որ պղծում է մարդուն, որովհետև ներսից, մարդկանց սրտից են ելնում չար խորհուրդները՝ շնություն, պոռնկություն, գողություն, սպանություն, ագանություն, չարություն, նենգություն, զիջություն, չար նախանձ, հաշիոյանք, ամբարտաւանություն, անպգամություն:

23 Այս բոլոր չարիքները ներսից են ելնում և պղծում մարդուն»:

Ժողովրդի բազմությանն ուղղված մի առակ (համար 14—15), այնուհետև բացատրություններ՝ տրված ի մասնավորի աշակերտներին (համար 17—23): Մարկոսը հավատարիմ է մնում երկամասնի քարույի այն ծրագրին, որ նա ներկայացրել է սերմնացանի առակի և հարակից մյուս առակների առիթով (տես վերը Մարկոս Դ. 10—12 և Դ. 33—34): Ամբոխը ստանում է պատկերավոր մի ուսուցում, որի մեկնությունը պարզ չէ: Հիսուս, ըստ իր սովորության, մեղադրում է իր աշակերտներին, որ չունեն անհրաժեշտ հասկացողությունը (համար 17—18), և նրանց տալիս է պետք եղած լուսաբանությունները, որպեսզի լավագույնս օգտվեն առակներից:

Իսկական անմաքրությունը մարդու ներսից է գալիս. դրանք այն բոլոր կործանարար ծրագրերն ու իրագործումներն են, որոնց ընդունակ է մարդ արարածը: Բերված գանկը շատ տպավորիչ է (համար 21—22): Մոլորությունների և մեղքերի այդպիսի թվարկումներ սովորական են Նոր Կտակարանում. օրինակ՝ դրա նմանները շատ կան Պողոսի թղթում:

Ընդհակառակն (և դա անկասկած այս հատվածի գերիշխող գաղափարն է), որևէ բան, որ մարդուց դուրս է գտնվում, չի կարող անմաքուր դարձնել նրան: Այս իմաստով Մարկոսը հեղափոխական է իր ժամանակի հրեաների համար: Նա հատկապես

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № 2 և № 3-ից:

նշում է, որ Քրիստոսին կամ նրա Եկեղեցուն պատկանելը ոչնչով կախված չէ մաքրության վերաբերյալ խորայնական կանոնների պահպանումից. մի դիակի կամ մի բոլորի դիպչելը, հեթանոսների հետ սեղան նստելը, կենդանիների միսն ուտելը, այս բոլոր արարքները, որոնք հրեա մարդու համար ծնունդ են տալիս ծիսական անմաքրության, բնավ չեն կարող մարդուն իրապես բաժանել Աստծուց: Եվ Մարկոսը իր հստակ տեսակետն է արտահայտում ամենավիճարկելի կետերից մեկի մասին՝ նշելով. «Այսպես բոլոր ուտելիքները մաքուր են» (համար 19):

Այնտարանիցը, այսպիսով, նախապատուստում է այն ճանապարհորդությունները, որ Հիսուս կատարելու է իր աշակերտների հետ Հրեաստանից դուրս, և որոնք սկսվելու են շուտով: Հենց որ այս ուսուցումն ավարտվում է, Հիսուս մեկնում է Տյուրոս (Մարկ. է 24—30):

Եվ, ավելի երկար ժամանակով, Մարկոսը հայտնում է, որ Եկեղեցին բաց է բոլորի առջև առանց ցեղի և ծագումի խտրության: Եկեղեցին տիեզերական է:

42. ՓՅՈՒՆԻԿԵՑԻ ԿՆՈՋ ՀԱՎԱՍՏ (Մարկ. է 24—30)

- Է 24 Եվ այնտեղից վեր կացավ-եկավ Տյուրոսի ու Սիդոնի սահմանները. և մի տուն մտնելով՝ չէր ուզում, որ որևէ մեկը իմանա, սակայն չկարողացավ թաքնելված մնալ:
- 25 Նրա մասին լսեց մի կին, որի դուստրը տառապում էր պիղծ ոգուց. սա եկավ—ընկավ նրա ոտքերը:
- 26 Այս կինը հեթանոս էր, փյունիկ-ասորի ազգից. աղաչում էր նրան, որ իր աղջկանից դևը հանի:
- 27 Եվ Հիսուս ասաց նրան. «Թո՛ւյլ տուր, որ նախ մանուկները կշտանան, քանի որ լավ չէ մանուկների հացը առնել և շների առաջ գցել»:
- 28 Կինը պատասխանեց և ասաց նրան. «Տե՛ր, շներն էլ մանուկների սեղանի փշրանքներից են կերակրվում»:
- 29 Եվ նա ասաց նրան. «Այդ խոսքիդ համար գնա՛, դևը քո աղջկանից դուրս ելավ»:
- 30 Կինը գնաց իր տունը և դեկն ելած գրեթե, իսկ աղջկան՝ պառկած մահճի վրա:

Տյուրոսը Միջերկրականի ափին ժայռոտ մի տարածության վրա հաստատված հիւսքանչ մի նավահանգիստ է, Տիբերիական լճից մոտ վաթսուս կիլոմետր հեռու, դեպի

հյուսիս-արևմուտք: Դա ամենից առաջ առևտրական քաղաք է: Ինքը քաղաքը և նրա շրջակայքը՝ Ասորական Փյունիկեն, բնակեցված են հեթանոսներով:

Հիսուս իր աշակերտների հետ գալիս է այս շրջանը, և այսպիսով մխվում է նրա առաջին երկարատև ճանապարհորդությունը Իսրայելի երկրից դուրս: Նա արդեն մի փորձ կատարել էր դեպի Տիբերիական լճի արևելյան ափը, գերգեսացիների մոտ, սակայն ցամաք ելնելուց քիչ ժամանակ անց մի դիվահարի բժշկումը պատճառ էր դարձել, որ իր վրա հրավիրի տեղի բնակիչների թշնամանքը, և ստիպված էր եղել ետ մեկնել (Մարկ. է 1—20):

Այժմ, ընդհակառակն, նա մի որոշ ժամանակ պիտի մնա հեթանոսական երկրում: Նրա այս առաջին կեցությունը պիտի ավարտվի հացերի երկրորդ բազմացումով, որից հետո նա իսկույն պիտի վերադառնա Հրեաստան (տես հաջորդ գլուխը, համար 10—13):

Այն ճանապարհորդությունը, որ ձեռնարկում է Հիսուս, նախապատրաստված էր մաքրության և անմաքրության մասին նրա արտասանած խոսքերով (Մարկ. է 14—23). նրա համար ոչ ոք չի ծնե անմաքուր չէ, հետևաբար նա պատճառ չունի հեթանոսների հետ շփման մեջ մտնելուց խուսափելու կամ նրանց հետ սեղան նստելուց հրաժարվելու: Մարկոսը հստակորեն նշում է, որ նա իջևանեց այդտեղի տներից մեկում: Չկա որևէ բան, որ ցույց տա, թե այդ տան տերերը հրեաներ էին:

Հիսուս, սակայն, վերապահ է մնում: Նրա համբավը վաղուց հասել է այդ շրջանը: Մարկոսը իր գրքի սկզբի մասում Հիսուսի վրա վազող բազմությունների մեջ նշում էր նաև ներկայությունը Տյուրոսի շրջակայքից եկած մարդկանց, որոնք հրապուրվել էին նրա կատարած հրաշքներով:

Եվ Գալիլիայից բազում ժողովուրդ էր գնում նրա ետևից. նաև Հրեաստանից, Երուսաղեմից և Եդոմից, Հորդանանի մյուս կողմից, ինչպես նաև Տյուրոսի և Սիդոնի շրջակայքից բազում ժողովուրդ, երբ լսում էր, թե նա ինչքան բան է անում, գալիս էր նրա մոտ (Մարկ. Գ 7—8):

Դա այն ժամանակ էր, երբ Հիսուս ստիպված էր պաշտպանվել այն տարօրինակ գրավչության դեմ, որ իր անձի նկատմամբ պզուռ էին հրաշքների ծարավի բազմությունները: Հիսուսի և Տյուրոսի ու նրա շրջակայքի բնակիչների միջև կա մի ծանր անցյալ, որով մասամբ բացատրվում է այն շատ խիստ նախադասությունը, որ, իբրև պատասխան,

լսում է այսահար աղջկա մայրը. «Թո՛ւյլ տուր, որ նախ մանուկները կշտանան, քանի որ լավ չէ մանուկների հացը առնել և շներին առաջ գցել» (համար 27):

Հիսուս արտահայտվում է պատկերավոր խոսքերով: «Մանուկները» հայտնապես հրեաներն են՝ ընտրյալ ժողովրդի անդամները, մինչդեռ հեթանոսները կոչվում են «շներ»՝ արհամարհանքի ուժեղ մի երանգով: Քսաներորդ դարի ընթերցողը պարմանում, նույնիսկ գայթակղվում է, որ Հիսուսի բերանը դրված են ալսքան ցեղապաշտական խոսքեր: Ճիշտ է, որ գործածված բառերը խիստ են:

Բայց բոլորովին սխալ է մտածել, որ Հիսուս այն մեղմ և մի քիչ քաղցրաբարո անձնավորությունն է, որ որոշ գրողներ, քրիստոնյա կամ ոչ, ներկայացրել են մեզ: Մեր թվագրության առաջին դարում հրեաների և հեթանոսների միջև գոյություն ունեցող բաժանումը իսկական մի պատմեջ էր, որը աստիճանաբար միայն կարելի էր վերացնել:

Հիսուս, որ հրեա էր, հայտարարում է, թե հեթանոսները անմաքուր չեն: Նա չի քաշվում գնալ նրանց մոտ, շփվել նրանց հետ, բայց դրա համար չի քողարկում բոլոր տարբերությունները: Այն գրավչությունը, որ բազմաթիվ հեթանոսներ զգում են նրա նկատմամբ, անսովոր է. Մարկոսն արդեն առիթ ունեցել է ասելու այդ բանը: Հետևաբար Հիսուսի առաջին մղումը լինում է փյունիկ-ասորի կնոջ կողմից իրեն ուղղված խնդրանքը մերժել: Տվյալ ժամանակաշրջանի համար դա շատ բնական էր:

Իհարկե (և հենց այդտեղ է դրվագի ամբողջ գեղեցկությունը) կինը նրա մերժումին հակադրում է մի հիմնալի պատասխան. նա ընդունում է, որ ինքը փշրանքներ ունի միայն, և դրանով իսկ չափում է մանուկներին սահմանված հացի ամբողջ արժեքը: Այսպիսի անխախտ համոզման առջև Հիսուս տեղի է տալիս:

Կնոջ դուստրը պիտի ապաքինվի. նա օգնեց Հիսուսին դուրս գալու իր մասնավոր հետաքրքրության օրինական շրջանակից: Նրա շնորհիվ Հիսուսի կեցությունը պիտի շարունակվի օտարականների մոտ, և հեթանոսները պիտի ստանան հետզհետե ավելի մեծ փշրանքներ, նույնիսկ ամբողջական հացեր (հացերի երկրորդ բազմացման ժամանակ, Մարկոս Ը 1—9):

Սա մեծ կարևորություն է ներկայացնում Հռոմի քրիստոնյաների համար, որոնց դիմում է Մարկոսը, ինչպես նաև բոլոր ժամանակների Եկեղեցու համար, որը պետք է անընդհատ խորտակի իր սահմանները:

43. ԲԱՅՎՈՂ ԱՎԱՆՁՆԵՐ ԵՎ ԿԱՊԱՆՔՆԵՐԻՑ ԱՐՉԱԿՎԱԾ ԼԵՁՈՒ (Մարկ. է 31—37)

Է 31 Եվ դարձյալ դուրս ելնելով Տյուրոսի և Սիդոնի սահմաններից՝ եկավ Փալիթայի ծովափը, Դեկապոլսի սահմանների մեջ:

32 Նրա առաջ բերեցին մի խուլ ու համր և աղաչեցին, որ իր ձեռքը դնի նրա վրա:

33 Եվ Հիսուս նրան ամբոխից մի կողմ տանելով՝ իր մատները դրեց նրա ալանջների մեջ և, թքելով, բռնեց նրա լեզվից:

34 Եվ ապա դեպի երկինք նայեց, հոգոց հանեց և ասաց՝ Եփիաթա, որ նշանակում է՝ բացվի՛ր:

35 Իսկույն նրա լսողությունը բացվեց, և լեզվի կազանքներն ընկան, և խոսում էր ուղիղ:

36 Եվ նա նրանց պատվիրեց, որ ոչ ոքի չասեն. բայց ինչքան էլ նա պատվիրում էր նրանց, նրանք առավել ևս էին տարածում:

37 Եվ ավելի ու ավելի էին պարմանում և ասում. «Սա ամեն ինչ լավ արեց, որովհետև խուլերին լսել է տալիս և համրերին՝ խոսել»:

Հիսուս հեռանում է Տյուրոսի սահմաններից, բայց մնում է հեթանոսական երկրում: Այնտեղ տեղի է ունենում մի անսովոր բեժքչկում, որ հաճախ համեմատում են բեթսալիդացի կուլրի բժշկման հետ, որը կատարվել է մի քիչ ավելի ուշ (Մարկ. Ը 22—26):

Փոխանակ մի պարզ շարժում կատարելու կամ իշխանությամբ մի խոսք ասելու, ինչ որ բավական պիտի լիներ հիվանդին բժշկելու համար. Հիսուս արամեերեն «Եփիաթա» բառին ավելացնում է մի շարք ձեռքի շարժումներ, որոնք կատարվում են մարմնի հիվանդ անդամների վրա. լորձունք՝ լեզվի վրա, մատներ՝ ալանջների մեջ... Եվ այս բոլորը արվում է ամբոխից մեկուսի, բժշկողի և նրան ներկայացված հիվանդի միջև նեղ անձնական հարաբերության պայմաններում: Խնդրողները, սակայն, Հիսուսին մոտեցել էին բոլորովին այլ մտածումով: Նրանք կարծում էին, որ հիվանդի վրա ձեռք դնելը բավական պիտի լիներ (համար 32): Հիսուս այլ կերպ էր դատում:

Ինչո՞ւ այս ամբողջ բեմադրությունը: Անկասկած այն կապված է այն իրողության հետ, որ Հիսուս, գտնվելով հեթանոսների շրջանում, ուզում էր գործադրել այն նույն մեթոդները, որ կիրառում էին այդ երկրի

բժշկողները: Դեկապոլսի բնակիչները նախապատրաստված չէին չափելու բիբլիական Աստուծո աւանակարողությունը: Եթե նրանք տեսնեին աստվածային զորության հանկարծակի գործադրումը, ապահովաբար պիտի չհասկանային այն, և վտանգ կար, որ հրաշքների սաստիկ ծարավ պահանջները մեկուսացած գործելով և դժբախտ մարդու մարմնի հիվանդ մասերի վրա մատների հպումներ կատարելով, Հիսուս ամոքում է նրա դժբախտությունը՝ պոռնիքներով հանդերձ իր մեջ եղած բացառիկ զորությունը բացահայտելուց: Նա գործում է այնպես, որ նրան ընդունեն իբրև սովորական մի բժշկողի, ինչպես փոքր բժշկողները:

Այսուհանդերձ, ըստ Մարկոսի ավետարանի, ժողովուրդը չի սխալվում: Նրա հիացումն անսահման է, նույնիսկ՝ չափազանցված: Մինչ բժշկված մարդը, նախքան իր բժշկումը, տառապում էր սոսկ խոսքի արտաբերման դժվարությամբ, հավանաբար խիստ շեշտված կակալումով, ներկայները կատարվածից ելրակացնում են, որ Հիսուս խոսել է տալիս համբերին (համար 37): Հնարավոր է, որ նրանք բերանը դնելով այն խոսքերը, որոնցով նրանք արտահայտում էին իրենց ոգևորությունը, ավետարանիչը ի մտի ունեցած լինի Շապու մեկ պատգամը, որով մարգարեն ոգեկոչում է այն երջանիկ ապագան, որ Աստված վերապահում է մարդկանց:

Այնժամ կբացվեն աչքերը կույրերի,
Եվ կլսեն ականջները խուլերի,
Այնժամ կվազի կաղն իբրև եղջերու,
Եվ կաղարավի լեզուն ծանրախոսների:
(Շապի 1Ե, 5—6)

Ինչ վերաբերում է բժշկման փաստին, այն արտահայտելով հանդերձ երջանկությունն ու ֆիզիկական առողջությունը, որոնք մաս են կազմում Աստուծո Թագավորությանը, անկասկած ունի նաև խորհրդանշական մի իմաստ. բացվող ականջներն ու ուղիղ խոսել սկսող բերանները անհրաժեշտ պայմաններն են Բարի լուրի տարածման: Հիսուսի աշակերտները չեն հիշատակվել այս դրվագում, սակայն նրանք հանդես են գալիս մյուս դրվագում (Մարկ. Ը 1): Նրանք մասնակից են այն ճանապարհորդությանը, որ Հիսուս կատարում է հեթանոսական երկրում: Առաջին նրանք պարզ հանդիսատեսներ են, բայց բժշկված հիվանդի անձի մեջ, որի ապաքինումը տեսան, իրենց սեփական ականջներն են, որ լսում են և իրենց սեփական լեզուն է, որ բացվում է:

Այն խեղճ մարդը, որին Հիսուս մի կողմ է տանում խնամելու համար, խորհրդանշա-

կան դեմքն է ամեն աշակերտի, որը հասու է դառնում խոսքին և համարձակվում է քարոզել այն:

44. ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԶՄԱՅՈՒՄ (Մարկ. Ը 1—9)

- Ը 1 Այդ օրերին ժողովուրդը դարձյալ շատ էր, և ուտելու բան չուներին: Հիսուս կանչեց իր աշակերտներին և ասաց նրանց.
- 2 «Սիրտս ցավում է այս ժողովրդի համար, որովհետև պարեն երեք օր է, որ ինձ մոտ են և բան չունեն, որ ուտեն: Եթե նրանց իրենց տներն պրծակեն քաղցած, ճանապարհին ուշագնաց կլինեն, որովհետև նրանցից ոմանք հեռուներից են եկել»:
- 4 Աշակերտները պատասխանեցին նրան և ասացին. «Որտեղի՞ց կարող են նրանց հացով կշտացնել այս ամառի վայրում»:
- 5 Եվ նա հարցրեց նրանց. «Քանի՞ նկանակ հաց ունեք»: Նրանք ասացին՝ յոթ:
- 6 Եվ նա հրամայեց ժողովրդին նստել գետնի վրա և վերցնելով յոթ նկանակները՝ զոհություն հայտնեց, կտրեց և տվեց աշակերտներին, որ դնեն ժողովրդի առաջ. և նրանք հացը ժողովրդի առաջ դրեցին:
- 7 Նրանք քիչ թվով ձկներ էլ ունեին. և նա այդ ևս օրինեց ու հրամայեց նրանց առաջ դնել:
- 8 Կերան և կշտացան և յոթ վամբուղ ավելացած կտորտանքներ վերցրին:
- 9 Եվ նրանք, որ կերան, մոտ չորս հապար հոգի էին: Այս նրանց արձակեց:

Հացերի այս երկրորդ բազմացման պատմությամբ մենք համում ենք հեթանոս բնակչության հետ Հիսուսի ունեցած հարաբերության գագաթնակետին: Նա նախապես ընդառաջել էր մի կնոջ խնդրանքին, որը հրեա ժողովրդին ընծայված կոչունքի սեղանից փշրանքներ էր հայցում (Մարկ. Է 24—30): Նա բաց էր արել Դեկապոլսի բնակիչներից մեկի լեզուն և ականջները (Մարկ. Է 31—37): Այժմ ինքն էր նախաձեռնում և այդ շրջանների մարդկանց համար տալիս էր խնջույքի մի սեղան, նման այն խնջույքին, որից օգտվել էին լճի մյուս ափին գտնվող հրեա բազմությունները (Մարկ. Զ 35—44):

Հացերի առաջին բազմացման ժամանակ աշակերտներն իրենք էին Հիսուսի ուշադրությանը հանձնել ներկա եղող ժողովրդի քաղցած լինելու հարցը: Այս դեպքում Հի-

սուս ինքն է լինում նախաձեռնողը: Աշակերտները, որոնք ներկա էին եղել նույնաման մի հրաշքի՝ հացերի առաջին բալամացմանը, չէին մտածում, որ նույն բանը կարող էր կրկնվել հեթանոս բնակչության համար: Ինչ որ Հիսուս արեց, դուրս էր մղում նրանց երևակայությունից: Ինչքան էլ մեծ եղած լինեի իրենց Տիրոջ բարյացակամությունը, նրանք չէին պատկերացնում, որ նա կկարողանար այդ աստիճանի հավասար դասել հեթանոսներին և հրեաներին:

Եվ սակայն... այն ձևը, որով Մարկոսը հիշատակում է եղելությունները, պարզ կերպով ցույց է տալիս, որ նրա համար հացերի երկրորդ բալամացումը ներկայացնում է հեթանոսներին տրված հաղորդության շնորհը, ինչպես նախապես այդ արվել էր հրեաներին: Բալամությունը երեք օր սպասել էր՝ ստանալու համար այդ սնունդը (համար 2): Այդ երեք օրերը թելադրում են նրա ունեցած նմանությունը Չառիի հետ, որի վերանորոգումն է հաղորդությունը: Այդ ձևով, որով Հիսուս օրհնում է հացերը (համար 6), նույնպես շատ մոտ է այն շարժումներին, որ նա անելու է վերջին ընթրիքին, տասներկու աշակերտների հետ, Ավագ հինգշաբթի օրը, երեկոյան (Մարկ. ԺԴ 22—25): Ինչ վերաբերում է սույն հատվածում եղած **չորս** և **յոթ** թվերին, դրանք գերազանցապես ընդհանրացած թվեր են. յոթը (համար 6 և 8) արարչագործության օրերի թիվն է, իսկ չորսը (համար 9) խորհրդանշում է երկրի չորս ծագերը կամ երկրային դրախտը ոռոգող չորս գետերը՝ ի սկզբանե աշխարհի:

Մի գետ էր ելնում Եդեմից՝ ոռոգելու դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս թևերի:

(Ծննդոց Բ 10)

Չորսը, ըստ բնության հնադարյան ընկալման, կարող է ներկայացնել նաև աշխարհի տարրերի ամբողջությունը՝ հող, օդ, ջուր, կրակ: Սակայն, ամեն դեպքում, չորս թվը հնադարի համար խորհրդանշում է ամբողջ երկիրը:

Երկրորդ անգամ բալամացնելով հացերը՝ Հիսուս մատուցում է մի տեսակ «պատարագ երկրի վրա»: Իսրայելի սահմանները խորտակվում, ջնջվում են ամբողջապես: Բոլոր մարդիկ հրավիրվում են հաղորդության, որը կենտրոնական արարողություն է Եկեղեցու կյանքի:

45. ԵՐԿՆԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՎԱՅՃԱՆԸ (Մարկ. Ը 10—13)

Ը 10 Եվ իսկույն աշակերտների հետ նավակ նստելով՝ եկավ Դաղմանուկայի կողմերը:

11 Եկան փարիսեցիները և սկսեցին վիճել նրա հետ և նրան փորձելով՝ երկնքից նշան էին ուզում նրանից:

12 Եվ նա իր հոգում վայրացավ և ասաց. «Ինչո՞ւ է այս սերունդը նշան ուզում. ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերունդին նշան չի տրվի»:

13 Թողեց նրանց, նորից նավակ մտավ և գնաց մյուս կողմը:

Հիսուս և իր աշակերտները արագ մի ճանապարհորդություն են կատարում լճի արևմտյան ափին: Դաղմանուկայի շրջանը, որը միայն այստեղ է հիշատակվում ամբողջ Աստվածաշնչում, դեռևս չի ձևավորվել հնագետների կողմից: Սակայն Մարկոսն այն որոշակիորեն տեղադրում է Հրեաստանում, ինչպես այդ ապացուցում է փարիսեցիների մի խմբի ներկայությունը այդ վայրում:

Արդարև, այդ մարդիկ «ուզում են մի նշան»: Նրանք չեն ասում, թե ինչ նշան են ուզում, բայց անկասկած խոսքը վերաբերում է Ելից օրերին կատարված հրաշքների նման մի հրաշքի, որով Հիսուս ապացուցեց, թե ինքը իրապես գործում է Աստուծո ափսոսումով: Իսրայելացիները, սերնդից սերունդ, հաճուքով էին հիշում երկնքից իջած մանան, լորամարգիները, անցումը Կարմիր ծովից և այն բոլոր իրադարձությունները, որ նրանք կրկին ու կրկին պատմում էին միմյանց և որոնցով Աստված իր պաշտպանությունն ու շնորհն էր ցույց տվել իր ժողովրդին: Սակայն նրանք, թվում է, նվազ հաճուքով էին հիշում այդ նույն ժողովրդի անհավատարմությունները անապատում անցկացրած քառասուն տարիների ընթացքում՝ կռապաշտություն, պահանջներ հավելալ հրաշքների, բալամտեսակ մեղքեր, որոնք, աշխուժանալով, ընդգծվել էին մարգարեական գրքերում և սաղմոսներում, ինչպես ցույց են տալիս հետևյալ տողերը, որոնցով Աստված իր գանգատն է արտահայտում Իսրայելի անհավատարմի սերնդի հանդեպ.

(Քառասուն տարի) վայրացա ընդդեմ այդ սերնդի
Եվ ասի. «Սրաով մոլորված են մշտապես,
Նրանք չճանաչեցին ճանապարհներն իմ»:
(Սաղմոս ԴԵ 10)

այդ կարգի մի բան էր (Մարկ. Ը 10—13):

Աշակերտները, ըստ երևույթին, չեն հասկանում այդ՝ մշտապես մտահոգված լինելով, որ իրենց հետ վերցրած ուտելիքն անբավարար է: Հիտուս մեղադրում է նրանց: Նրա մեղադրանքը ոչ այնքան նրա համար է, որ նրանք չեն հասկանում, թե ինչի՞ մասին է խոսում ինքը, որքան այն բանի համար, որ նրանք սննդի պատճառով հոգս են անում այն դեպքում, երբ ինքը նրանց հետ է: Որ նրանց միտքը փակ է, դա այնքան էլ մեծ կարևորություն չունի, բայց այն, որ նրանց անհասկացողության պատճառը նրանց քարացած սրտերն են, դա անհամեմատ ավելի ծանր է: Այն, ինչ արեց Հիտուս հինգ հացով՝ հինգ հազար մարդու համար, ապա նաև յոթ հացով՝ չորս հազար մարդու համար, մի՞թե նույն բանը նորից չի կարող անել մեկ հացով՝ մի բուռ մարդկանց համար, որոնք կարող են տեղավորվել ձկնորսական մի փոքրիկ մակույկում:

Մտահոգվել սննդով, ինչպես այդ անում են աշակերտները, նշանակում է վատահույություն չունենալ, նշանակում է ապրելու համար հույսը դնել միայն ու միայն իր ունեցածի վրա, նշանակում է մոռանալ, որ Հիտուս երբեք անօգնական չի թողնում յուրայիններին նրանց անհրաժեշտ եղող բաներում:

Մարկոսը չի քարոզում անպատասխանատու մի ապավինում նախախնամությանը, այլ հրավիրում է մարդկանց վատահույություն ունենալ Հիտուսի հանդեպ, ինչպես մարգարեները, որոնք Իսրայելի ժողովրդին քարոզում էին վատահույություն ունենալ Աստուծո հանդեպ: Աշակերտներին ուղղված Հիտուսի թեղադրանքը՝ թե՛ աչքեր ունեն ու չեն տեսնում, ակնաջներ ունեն ու չեն լսում (համար 18), շատ նման է այն մեղադրանքներին, որ Աստված ուղղում էր Իսրայելի ժողովրդին Քրիստոսից մոտ վեց դար առաջ՝ ելեկիել մարգարեի միջոցով: Ահա թե ինչ էր ասում Տերը մարգարեին.

Որդի՛ մարդու,

Դու բնակվում ես անօրեն մարդկանց մեջ, որոնք աչքեր ունեն տեսնելու ու չեն

տեսնում,

Ակամջներ ունեն լսելու ու չեն լսում,

Քանզի նրանք ապստամբների տուն են:

(Ելեկիել ԺԲ 2)

Աշակերտներն ունեն նույնքան քարացած սրտեր, որքան միշտ ունեցել է Աստուծո քնտրչալ ժողովուրդը և հավիտենապես ունենալու են բոլոր ժամանակների քրիստոնյաները: Չի՞ պատահում բնավ, որ Ելեկիցին մտահոգվի ավելի իր գոյատևությամբ,

քան իր Տիրոջ նկատմամբ անխախտ հավատարմությամբ:

47. ԲԱՅՎՈՂ ԱՉՔԵՐ (Մարկ. Ը 22—26)

Ը 22 Եկան Բեթսայիդա: Նրա առաջ բերեցին մի կույրի և աղաչում էին, որ դիպչի նրան:

23 Եվ նա բռնելով կույրի ձեռքից՝ գյուղից դուրս հանեց. նրա աչքերը թքով թորեցեց և ձեռքը նրա վրա դրեց. և հարցնում էր կույրին, թե բան տեսնո՞ւմ է:

24 Բացվեցին նրա աչքերը, և նա ասաց. «Տեսնում եմ մարդկանց, որ շրջում են ինչպես ծառեր»:

25 Նա կրկին ձեռքերը դրեց նրա աչքերի վրա. կույրը իր աչքերը բացեց և տեսնում էր. բժշկվեց և ամեն ինչ հստակ տեսնում էր:

26 Հիտուս նրան դեպի իր տունն արձակեց և ասաց. «Գյուղ մի՛ մտիր, այլ գնա՛ քո տունը, իսկ երբ գյուղ մտնես, գյուղում ոչ ոքի չասես»:

Այս բժշկմանը վերաբերող դրվագով Հիտուսի և նրա աշակերտների համար սկսվում է երրորդ և վերջին ճանապարհորդությունը հեթանոսական երկրում: Նրանք ցամաք են ելնում Բեթսայիդայում, լճի արևելյան ափին, ապա այնտեղից առաջանալու են դեպի երկրի խորքերը:

Հրեաստանից դուրս արդեն տեղի են ունեցել երկու ճանապարհորդություններ. առաջինը՝ շատ կարճ (Մարկ. Ե 1—20), երկրորդը՝ ավելի կարևոր (Մարկ. Ե 24—Ը 9): Այն ճանապարհորդությունը, որ այժմ սկսվում է, նմանապես պիտի լինի բավականին երկար: Նրա վախճանը եւս հստակորեն չի նշվել, ինչպես մյուս երկու ճանապարհորդություններին:

Երկրորդ ճանապարհորդության ժամանակ տեղի ունեցավ մի բժշկում, որը վարմանալիորեն նմանվում է Բեթսայիդայի կույրի բժշկմանը (Մարկ. Ե 31—37): Երկու դեպքում էլ հիվանդը Հիտուսի մոտ բերվում է ուրիշների կողմից, որոնք խնդրում են նրան, որ միջամտի: Հայտնի չէ, թե ովքեր են անում այդ խնդրանքը՝ աշակերտները, թե՛ տեղի մարդիկ: Հիտուս մի կողմ է տանում հիվանդին և նրա վրա կատարում ձեռքի որոշ շարժումներ՝ հատկապես օգտագործելով իր յորձուները: Այդ անեկիս՝ նա գործում է այնպես, ինչպես պիտի գործեն լուրջ ժամանակի շատ բժշկուհիներ՝ հույս ունենալով անկասկած, որ դա կօգնի նվազեցնելու հրաշագործության յուրի տարածումը ժողովրդի մեջ: Բացի այդ, երկու դեպքում էլ, բժշկումից հետո հրահանգվում է:

կատարվածի շուրջ պահպանել լուրջություն: Եվ ավելի ապահով լինելու համար, Հիսուս հիվանդին պոռնացնում է իր գլուխի՝ Բեթսալիդայի բնակիչների աչքին չերևալ:

Կուրի մասին այս պատմությունը, սակայն, ունի հավելյալ մի առանձնահատկություն. դա երկու շրջանից բաղկացած մի բժշկում է, որ եզակի երևույթ է Նոր Կտակարանում, երբ հիվանդը աստիճանաբար է վերագտնում իր հստակ տեսողությունը: Ամենայն հավանականությամբ այս եղելությունը գերապանցապես խորհրդանշական է և առնչվում է ավետարանում գործող այն անձանց առաջընթացի հետ, որոնք աստիճանաբար են բացահայտելու Հիսուսի ինքնությունը:

— Առաջին հանգրվան. կուրը պղտոր է տեսնում (համար 24): Նույն ձևով, Մարկոսի ավետարանի առաջին մասի վերջում, Պետրոսը Հիսուսի անձի մեջ տեսնում է հրեաների Մեսիային, ինչ որ, անշուշտ, սխալ չէ, բայց դեռևս թերի է.

Դու Քրիստոս ես:

(Մարկ. Ը 29)

— Երկրորդ հանգրվան. կուրը ամբողջովին հստակ է տեսնում, նույնիսկ հեռվից (համար 25): Նմանապես, Գողգոթայի ճանապարհի վերջավորության, որը Հիսուսին տանելու էր դեպի խաչը, մի հարյուրապետ ի վիճակի պիտի լինի հատկորեն ասելու, թե ով է Հիսուս.

Իրոք այս մարդը Աստուծո Որդի էր:

(Մարկ. ԺԵ 39)

Հիսուսի անձը չափապանց մեծ է և բազմաբովանդակ՝ սերմավելու համար միայն մեկ ժամանակի մեջ: Նախ տեսնում ենք նրա հպորությունը, որը մեզ թույլ է տալիս նրա մեջ ճանաչելու Մեսիային. ապա բացահայտում ենք նրա թուլությունը, նրա կամքը՝ ենթարկվելու իր հակառակորդների ոճրափն ծրագրերին, ընդունելու իր մահը:

Ժամանակ է հարկավոր ըմբռնելու համար այն, ինչ Աստված ասում է մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով: Արդարև, նա գերապանցապես խաչված Մեսիայի դեմքն է:

48. ՊԵՏՐՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Մարկ. Ը 27—30)

Ը 27 Եվ Հիսուս իր աշակերտներին հետ միասին ելավ—գնաց Փիլիպպյան Կեսարիայի գյուղերը: Ճանապարհին աշակերտներին հարցնում էր և ասում. «Մարդիկ ի՞նչ են ասում իմ մասին՝ ո՞վ եմ և որտեղի՞ց»:

28 Նրանք պատասխան տվեցին և ասացին. «Հովհաննես Մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիամ, իսկ ուրիշներ՝ մարգարեներից մեկը»:

29 Նրանց ասաց. «Իսկ դուք ի՞նչ եք ասում իմ մասին՝ ո՞վ եմ և որտեղի՞ց»: Պետրոսը պատասխան տվեց և ասաց նրան. «Դու Քրիստոսն ես»:

30 Եվ նա խստիվ պատվիրեց նրանց, որ իր մասին մարդու բան չասեն:

Փիլիպպյան Կեսարիան մի փոքրիկ քաղաք է, որ գտնվում է Հրեաստանից դուրս, Հորդանան գետի ակունքների մոտ, Հերմոն լեռան ստորոտին: Այսօր այդ տեղանքը կոչվում է Բանիաս: Քաղաքն անվանում էին «Փիլիպպյան Կեսարիա»՝ այն տարբերելու համար ծովեզերյա Կեսարիայից, որը պաղեստինյան ափի մեծ նավահանգիստն էր: Արդարև, քաղաքը վերականգնվել էր Հերոդեանի որդիներից մեկի կողմից, որ այդ անունն էր կրում և որի իշխանության տակ էին գտնվում այդ շրջանները: Ահա այս հատվածում է տեղի ունենում դեպքը, որ ընդհանրապես կոչվում է «Պետրոսի խոստովանությունը»:

Հիսուս սովորություն չունի հարցեր ուղղելու իր աշակերտներին: Ընդհակառակն, սովորաբար աշակերտներն են հարցեր ուղղում նրան: Սակայն խոսքերի փոխանակումը, որ Մարկոսը նկարագրում է, համապատասխանում է հանդիսավոր մի պահի. դա անցած մի ճանապարհի վախճանն է:

Աշակերտները Հիսուսի հետ են բավականին երկար ժամանակից ի վեր: Մարկոսը չի ասում, թե դա քանի՞ ամիս է կամ քանի՞ տարի: Տրամաբանորեն կարելի է մտածել՝ մեկ կամ երկու տարի: Տերն ուլում է իմանալ, թե մարդիկ ինչ են մտածում իր մասին, և հասկանալի է, որ լայն հասարակության կարծիքին վերաբերող հարցին բնական կերպով հետևելու է ավելի արմատական՝ աշակերտներին ուղղված հարցը. «Իսկ դուք ի՞նչ եք ասում իմ մասին՝ ո՞վ եմ և որտեղի՞ց» (համար 29): Լայն հասարակության կարծիքը, ըստ որի Հիսուս իբր Հովհաննես Մկրտիչն է, Եղիամ կամ մարգարեներից մեկը, արդեն արտահայտվել է (Մարկ. Ը 14—16):

Աշակերտները Հիսուսի հետ ունեցել են առանձնահատուկ հարաբերություններ: Նա նրանց առանձնացրել է՝ տալու համար ընդունց այնպիսի մի ուսուցում, որ ամբողջ իրավունք չունի ստանալու. նրանց իր հետ տարել է համարյա ամեն տեղ, ուղարկել է քարոզելու: Նրանք կազմում են այն խումբը, որի մոտ նա ձեռնամուխ է եղել այնպիսի մի ուսուցման, որ կարելի է կոչել հավա-

տի մանկավարժություն, ուսուցում, որ նա, իհարկե, տարել է ավելի կամ նվազ հաջողությամբ, որովհետև նրանց քարացած սրտերը և նրանց թերահավատությունը դեռևս գերիշխում են նրանց մեջ: Այստեղից էլ իրավացիությունը այն հարցի, որ Հիսուս ուղղում է նրանց. «Իսկ դուք ի՞նչ եք ասում իմ մասին՝ ո՛վ եմ և որտեղի՞ց»:

Սա, իհարկե, արմատական հարցն է: Հիսուսի միջոցով Մարկոսը այս հարցն ուղղում է իր ընթերցողներին: Եվ նրանցից յուրաքանչյուրը հրավիրվում է տալու իր սեփական պատասխանը:

Պատասխանողը Պետրոսն է լինում, նա, ով ավետարանի սկզբում կոչվում էր Սիմոն: Հիսուս նրան տվել է որոշ ամրություն արտահայտող խորհրդանշական մի մականուն: Հենց առաջին օրերից նա պատվավոր դիրք է գրավում աշակերտների մեջ. իր եղբոր՝ Անդրեասի հետ, նա կանչված առաջին երկու աշակերտներից մեկն է (Մարկ. Ա 16—20): Նրա տանն է, որ Հիսուս տեղավորվեց Կափառնախումում (Մարկ. Ա 29—31). նրա անունը տամերկու աշակերտների ցուցակի սկզբին է Մարկ. Գ 13—19). վերջապես, Հակոբոսի և Հովհաննեսի հետ, նրան թույլատրվեց մտնել մեռելի սենյակը, Հայրոսի տանը (Մարկ. Ե 21—43): Աշակերտների մեջ նա միակ անձն է, որի մասին Մարկոսի ավետարանում ամենից շատ է խոսվել մինչև այժմ: Ուստի ընթերցողը կարող է միանալ նրան և նրա հետ պատասխանել. «Դու Քրիստոսն ես» (համար 29):

Պետրոսը Հիսուսի մեջ ճանաչեց այն Մեսիային, որին սպասում էին հրեաները: Ավետարանիչը չի ասում, թե որոշակի ինչպիսի՞ նշաններին: Նա մի ամբողջ ճանապարհ է անցել՝ հասնելու համար այդ խոստովանությանը: Իսկ դա հասկանալու համար, հարկավոր է նրա հետ նորից անցնել այդ ճանապարհը և վերապրել Ավետարանը սկզբից սկսած: «Մեսիա» բառը Մարկոսի գրվածքում, առաջին համարից սկսած, չի երևիվացել ոչ իսկ մեկ անգամ (տես վերը Մարկ. Ա 1): Այդ բառը, որ ի վերջո հայտնվում է Պետրոսի բերանում, արտահայտությունն է այն հարաբերության, որ աստիճանաբար հաստատվել է տիպական աշակերտի և Հիսուսի միջև. «Դու Քրիստոսն ես»:

Այս խոսքն արտասանողը Պետրոսն է, մի հրեա, և այն արտասանվում է հեթանոսական երկրում: Խորհրդանշականորեն, Մարկոսը հրավիրում է Հռոմի հրեաներին, որպեսզի, հավատին տանող այդ ճանապարհի ավարտին, նրանք ևս ընդունեն, որ Հիսուս Մեսիան է:

Այսուհանդերձ, Պետրոսի այս հաստատու-

մից անմիջապես հետո, աշակերտներին հրահանգ է տրվում այդ մասին պահպանել լռություն: Նրանք հրավիրվում են պահելու այն, ինչը ավետարաններում սովորաբար կոչվում է «մեսիական գաղտնիք»: Տեսանք արդեն, որ Հիսուս լռություն է պարտադրում դեռևս (Մարկ. Ա 21—28), բժշկված մարդկանց, ինչպես նաև հրաշքների վկաներին (Մարկ. Ա 40—45): Այժմ գաղտնիքն ստանում է մի նոր տարրողություն: Այն մեսիան, որին աշակերտները ճանաչեցին Հիսուսի մեջ, հրեական ավանդությամբ, ոչ միայն արդար և հավատարիմ մի մարդ է, այլև բանականների առջևից գնացող քաղաքական մի պատարար, որին պաշտպանում է Տերը:

Հիսուս վախենում է, որ մարդիկ իր մասին կարող են ունենալ այդպիսի պատկերացում, որը չի համապատասխանում Աստուծո ծրագրին: Մանավանդ իր աշակերտները չպետք է լինեն դրա մոլեռեղծները: Հենց հաջորդ համարից, որով սկսվում է Մարկոսի ավետարանի երկրորդ մասը, Հիսուս, հապիվ ճանաչված իր աշակերտներից, ամբողջովին շուռ պիտի տա դասական Մեսիայի այս պատկերը:

49. ԱՌԱՋԻՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (Մարկ. Ը 31—33)

- Ը 31 Եվ սկսեց ուսուցանել նրանց, թե մարդու Որդին պետք է բազում չարախառններ կրի, անարգվի երեցներից ու քահանայապետներից և դպիրներից, մեռնի և երբորդ օրը հարություն առնի:
- 32 Նա այս խոսքը ասաց բացահայտորեն. և Պետրոսը նրան մի կողմ տանելով՝ սկսեց հանդիմանել նրան:
- 33 Իսկ նա դարձավ—տեսավ աշակերտներին, հանդիմանեց Պետրոսին ու ասաց. «Ետևս գնա, սատանա, որովհետև դու Աստուծո՝ բաները չես խորհում, այլ՝ մարդկանց»:

Սկսվում է ինչ-որ նոր բան՝ ավետարանի երկրորդ մասը, որն ավարտվելու է խաչի մոտ կանգնած հարյուրապետի խոստովանությամբ.

Իրոք այս մարդը Աստուծո Որդին է:
(Մարկ. ԺԵ 39):

Հիրավի, ընթերցողը վաղուց գիտի, որ Հիսուս կորստյան է դատապարտված: Իր առաքելության հենց սկզբի օրերին նրա վեժ դուրս եկան հակառակորդներ: Շաբաթ օրով նրա կատարած մի բժշկման հետևանքով ավետարանիչը գրել էր.

Փարիսեցիները հերոսիկականների հետ իսկույն դուրս ելան և խորհուրդ էին անում նրա դեմ, թե ինչպես նրան կորստյան մատնեն:

(Մարկ. Գ 6)

Այդ անխուսափելի մահվան հայտնությունը, սակայն, մասնավորապես ցայտուն է դառնում, երբ որ Հիսուս Պետրոսի կողմից ճանաչվում է որպես Մեսիա: Հրեա մարդու համար անըմբռնելի է, որ Իսրայելի Մեսիան կարող է երեցներից, քահանայապետներից ու դպիրներից անարգվել և սպանվել՝ նախքան ժողովրդին ի նպաստ լի հաղթական գործը հաջողությամբ ավարտին հասցնելը: Ուշագրավ է, որ Հիսուս, այդ հայտնությունն անելու համար, չի գործածում Պետրոսի կողմից արտասանված **Քրիստոս** բառը, այլ ինքն իրեն ներկայացնում է որպես **Մարդու Որդի**, մի արտահայտություն, որ ցույց է տալիս միաժամանակ նրա պորությունը և խոցելիությունը (Մարկ. Բ 1—13): Մարկոսի ամետարանի երկրորդ մասը ամբողջովին ներթափանցված է կյանքի և մահվան մի-ն գոյություն ունեցող հակադրությամբ. կյանք, որի տերն է Հիսուս, և մահ, որ նա ընդունում է:

Քանզի Մարդու Որդու հարությունը նույնպես հայտնվում է. «վեր կենալ» բառը մեկն է այն բառերից, որոնցով Սոր Կտակարանը ցույց է տալիս այդ հարությունը: Եվ այն «երեք օրերը», որոնց մասին խոսում է Հիսուս, աստվածաշնչային ավանդական մի արտահայտություն են՝ ցույց տալու համար հարության և փրկության ժամանակը: Ահա, օրինակ, թե ինչ էր գրում Ովսե մարգարեն.

**Դառնանք ու գանք դեպի Տերը մեր,
Քանզի նա մեզ հարվածեց, նա էլ պիտի
բժշկի.**

**Վիրավորեց մեզ և պիտի պառի նա վերքերը
մեր,**

**Պիտ՝ կենդանացնի մեզ երկու օր հետո,
Ու նրա առաջ պիտի ապրենք մենք:**
(Ովսե 2 1—2)

Մարդու Որդին սահմանված է հարություն անելու. բայց առաժմ մահն է պարտադրվում նրան և հակադրվում այն իշխանությանը, որ նա դրսևորեց Մարկոսի ավետարանի առաջին մասում: Աշակերտների համար դա անընդունելի մահ է, որ Հիսուս չի վախենում հայտնել բացեիքաց, առանց զաղտնապահության ու խորհրդավորության: Աստվածորդի լինելու մասին լռություն պահպանելն անհրաժեշտ էր. հարկավոր էր նաև չհրապարակել այն հրաշքները, որ ինքը

գործում էր, որպեսզի մարդիկ չտարվեին մակերեսային ոգևորությամբ: Սակայն անհրաժեշտ էր թաքցնել, որ ինքը պիտի մեռնի. դրանում ոգևորություն առաջացնելու վտանգ չկար:

Այստեղ հատկանշական է Պետրոսի հակադեցությունը. ոչ միայն նա չի տարվում այդ հայտնությամբ, այլև իր ամբողջ էությամբ վանում է այն: Հակառակ դեռևս երեքուն իր հավատին, նա կապված է Հիսուսին: Նա կրա մեջ որոշապես ճանաչել է Քրիստոսին, և հետևաբար պետք է իր Տիրոջը վերապահված լինի բոլորովին այլ ապագա, քան ձախողությունը՝ չհաջված տակավին, որ ինքը նրա աշակերտն է, և երբ Տերը գնում է դեպի մահը, վտանգ է սպառնում նաև հենց իր՝ աշակերտի կյանքին: Մարդ հոժարակամ չի գնում մեկի ետևից, որին ողբերգական ապագա է սպասում:

Պետրոսը հանդիմանում է Հիսուսին ճիշտ աշակերտ, ինչպես Հիսուս ինքն էր հանդիմանել աշակերտներին՝ ցանկանալով գաղտնի պահել Մեսիայի իր հանգամանքը: Իր հերթին հանդիմանվում է նաև ինքը Պետրոսը: Այն խոսքերը, որ Հիսուս ուղղում է նրան, շատ խիստ են: Պետրոսը որակվում է դև: Նա վերաբերվում է ինչպես Սատանան, որը հատուկ անունն է Աստուծո ծրագրերին արգելք հանդիսացող ամենամեծ Հակառակորդի: Առաջին օրերի փորձիչը (տես Մարկ. Ա 12—13) նորից կանգնած է Հիսուսի դիմաց, աշակերտների խմբի կենտրոնում, որոնք ամբողջապես ենթակա են նրանից վարակվելու վտանգին: Միևնույն փորձությանը Հիսուս նորից պիտի ենթարկվեր խաչի վրա, հոգին ավանդելիս, երբ անցորդները պիտի դողեին նրան մի հրաշք գործել և ազատվել այդ վիճակից:

«Վա՛հ, որ քանդում էիր տաճարը և երեք օրում շինում, ապառի՛ր ինքդ քեզ և իշի՛ր այդ խաչից»

(Մարկ. ԺԵ 30—31)

Աշակերտները, որոնք արդեն շատ էին դժվարանում հասկանալ Աստուծո Թագավորության մասին Հիսուսի քարոզչությունը, ինչպես և նրա պորավոր գործերը, հաստատապես ավելի ու ավելի են շփոթվում... Նրանց հետ նաև՝ ավետարանի ընթերցողները:

Յուրաքանչյուր մարդ վատ է ընդունում իր սեփական մահը: Սակայն դա այն ճանապարհն է, որ Հիսուս առաջարկում է ինքն իր համար և բոլոր նրանց համար, ովքեր հանձն են առնում գնալ նրա ետևից:

50. ԿՈՐՅՆԵՒ, ԹԵ ՓՐԿԵԼ ԻՐ ԱՆՁԸ
(Մարկ. Ը 34-ից Թ 1)

- Ը 34 Եվ նա իր մոտ կանչելով ժողովրդին, աշակերտների հետ միասին, առաջ նրանց. «Եթե մեկը կամենում է գալ իմ ետևից, թող ուրանա իր անձը, թող վերցնի իր խաչը և գա իմ ետևից.
- 35 որովհետև ով կամենում է ապատել իր անձը, պիտի կորցնի այն. իսկ ով կորցնի իր անձը ինձ համար և Ավետարանի համար, պիտի ապատի այն:
- 36 Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի. որովհետև մարդ ի՞նչ ունի տալու իր անձի փոխարեն:
- 38 Ով որ ամոք համարի ինձ և իմ խոսքերը այս շնացող և մեղավոր ազգի մեջ, մարդու Որդին էլ նրան պիտի ամաչեցնի, երբ գա փառքովն իր Հոր և սուրբ հրեշտակներին»:
- Թ 1 Եվ առաջ նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թե նրանցից, որ այստեղ են, կան ոմանք, որոնք մահ չպիտի ճաշակեն, մինչև որ տեսնեն Աստուծո Թագավորությունը՝ Վորությամբ եկած»:

Կշտամբելուց հետո Պետրոսին, որն ուսում էր արգելք հանդիսանալ իրեն՝ գնալու դեպի այն չարչարանքները, որ սպասում էին իրեն, Հիսուս իր մոտ է կանչում ժողովրդին: Բայց ո՞ր ժողովրդին: Հիսուս և իր աշակերտները գտնվում էին հեթանոսական երկրում, ըստ երևույթին միշտ Փիլիպպյան Կեսարիայի շրջանում (Մարկ. Ը 27—30): Երկրի այդ անկյունում բնակվող մարդիկ երբեք ոչ մի խոսք չէին լսել Ավետարանի մասին, և սակայն Հիսուս նրանց է ուղղում իր խոսքը՝ նրանց միտքը բանալու և հասկացնելու համար նրանց իր անձը կորցնելու անհրաժեշտությունը:

Այժմ հեռու ենք այն շրջանից, երբ միայն աշակերտներին էր իրավունք վերապահված ստանալու բացատրություններ, որոնցից պրկված էր ժողովրդի անանուն զանգվածը (Մարկ. Դ 10—12): Ամեն մարդ կարող է և պետք է իմանա, որ Հիսուս շուտով մահվան պիտի դատապարտվի իշխանությունների կողմից, և որ նույն ճակատագիրն է սպասում նաև նրա ճշմարիտ աշակերտների մեծ մասին: Խաչը, որի մասին Մարկոսը առաջին անգամ լինելով խոսում է այստեղ, տանջանքի այն գործիքն է, որ հռոմեական իշխանությունը վերապահում էր ստորին խավի ներկայացուցիչներին՝ ստրուկներին և խոնարհ ծագումով մարդկանց: Երևելի մարդկանց համար պատվավոր մահապատիժ էր գլխատումը: Հաճախ խաչելու-

թյան դատապարտված մարդը պարտավոր էր իր ուսի վրա տանել լախակի կտրված գերանը, որի վրա ամրացվում էր նրա մարմինը, մինչև ուղղահայաց ձողը մշտապես խրված էր մուռն հողի մեջ:

Ահա այս է, որ սպասում է Հիսուսին, անհաշտ մի մարդու, ինչպիսին վաղուց հայտարարել էին նրան իր հակառակորդները: Իսկ աշակերտներն ընդհանրապես ավելի լավ ճակատագիր պիտի չունենան, քան իրենց Տերը:

Ամեն անհատ, որ դողում է իր կյանքի վրա կամ ձգտում է սեփականացնել աշխարհը ամենահեշտ միջոցներով, անխուսափելիորեն անպտուղ է լինում: Սա ճշմարիտ է ինչպես ամեն մարդու, այնպես էլ մարդկային ամեն մի խմբի համար, ներառյալ Եկեղեցին: Անմիջական հաջողության որոնումը առաջնորդում է երկարատև ճախողության:

Հեթանոս և անանուն ամբողջ, որին Հիսուս ուղղում է իր խոսքը, Մարկոսի համար անկասկած ներկայացնում է Հռոմի Եկեղեցին, որը բաղկացած էր մեծ մասամբ հրեական ծագում չունեցող քրիստոնյաներից, որոնք փորձության էին ենթարկվել ուրանալու իրենց պետին, հրաժարվելու իրենց հավատից՝ խույս տալու համար հալածանքներից: Այդ, առավել պտղաբեր է ուրանալ իր սեփական անձը՝ մինչև իսկ խաչվելու վրտանգին ենթարկելով իրեն Հիսուսի ետևից: Զգուշավորությամբ խնայված կյանքը մահվան է տանում միայն, իմանալի մահի ճանապարհն է ճշմարիտ կյանքի: Այս է Մարկոսի ուսուցման հանգուցակետը Պողոս առաքյալի հետևյալ ուսուցումից հետո.

«Կորստյան մատնվածների համար խաչի ճառը հիմարություն է, իսկ մեզ՝ մրկվածներին համար՝ Աստուծո Վորություն»:

(Ա Կորնթ. Ա 18)

Աստուծո և Իսրայելի ժողովրդի միջև գոյություն ունեցող հարաբերությունները մարգարեները հաճախ համեմատել են հարսանիքի կամ նշանախոսության հետ. ամեն անգամ, երբ Իսրայելի ժողովուրդը փախչում է աստվածային օրենքից, դավաճանում է իր սիրո պգացումներին: Հիսուս նույն պատկերն է գործածում այստեղ. ուրանալ Քրիստոսին, որն իրեն ամբողջապես պիտաբերում է մարդկանց համար, նշանակում է շնություն անել (համար 38):

Պետրոսը, որի մեջ դևն էր մտել, երբ նա ուսում էր արգելել Հիսուսին, որ գնա դեպի մահը (Մարկ. Ը 31—33), հետագայում պիտի դառնա անհավատարիմ աշակերտի տիպարը, երբ, Ավագ հինգշաբթի լույս ուրբաթ գիշերը, պիտի հայտարարի, թե չի ճանաչում իր Տիրոջը (Մարկ. ԺԴ 66—72): Աշակերտի մեծություններն ու թուլությունները

հիմնավորեն մեկտեղված են նրա անձի մեջ:

Հիսուսի խոսքերը, սակայն, որոնցով եզրափակվում է նրա այս փոքրիկ ճառը, մեղմացնում են նախորդ նախադասությունների խստությունը՝ ավարտվելով նվազ ողբերգական մի շեշտով. «...Ոմանք մահ չպիտի ճաշակեն, մինչև որ տեսնեն Աստուծո թագավորությունը՝ պորությամբ եկած» (գլուխ Թ, համար 1):

Այս խոսքերի իմաստի շուրջ մարդիկ շատ հաճախ հարց են տվել իրենք իրենց: Ի՞նչ բան է Աստուծո թագավորության այդ ուժեղ հայտնությունը: Արդյո՞ք դա չի վերաբերում Քրիստոսի այլակերպությանը, որին շուտով ներկա պիտի լինեն երեք աշակերտներ, այդ թվում և Պետրոսը (Մարկ Թ 2—8): Կամ նրա հարությանը: Կամ Եկեղեցուն վերապահված ապագա խաղաղությանը: Կամ էլ, —և գուցե սա լավագույն ենթադրությունն է, — հալածանքի չենթարկված այն աշակերտների ձակատագրին, որոնք պիտի տեսնեն Աստուծո թագավորությունը առանց անցնելու տանջալից մահվան բովից:

«Մահ ճաշակել» արտահայտությունը, որ գործածում է Հիսուս, մտածել է տալիս «խմել այն բաժակը, որ ես խմելու եմ» ար-

տահայտության մասին, որ նա գործածելու է հետագայում (Մարկ. Ժ 38): Դա այն դաժնության բաժակն է, որ հալածիչները բռնի խմեցնում են իրենց պոհերին: Այս դեպքում նախադասությունը կունենա հետևյալ իմաստը. եթե բոլորը, Հիսուսի նման, հանձնառու են հնարավոր նահատակության, ոմանք պարտավոր չեն գնալու մինչև այդտեղ: «Խաչը», որից ոչ ոք չի կարող խուսափել, այդպիսիների համար պարզապես պիտի կոչվի «տառապանք, կողոսպուտ կամ պոկանք». և նրանք Աստուծո թագավորությանը պիտի հասնեն իրենց մահից հետո՝ առանց տանջանք ճանաչած լինելու:

Ինչպիսին էլ լինի այս ճառի ավարտի հստակ մեկնաբանությունը, այն ունի հուսադրող մի տոնայնություն՝ որպես եզրակացություն որոշ խստությամբ արտահայտված մի հորդորի: Այն է՝ հանգիստ մահ թե՛ նահատակություն, մոռալուտ վախճան թե՛ հեռավոր չարչարանքներ, այդ բոլորը պիտի առաջնորդեն դեպի Աստուծո թագավորություն: Այսպիսով Մարկոսն արտահայտում է հարության ամբողջական ըմբռնումը Քրիստոսի մահից և հարությունից հետո:

(Շարունակելի)